ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

ՀՀ ԷԵԲՊՆ ՋՏՊԿ «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-Ջ-ԳՀԾՁԲ-18/4 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով Ազատի ջրամբարի հատակային ջրթողի սնուցման խողովակաշարի շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման նիստի

ք. Երևան 13 օգոստոսի 2018 թ.

ժամը՝ 11:30

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	**Գ. Մկրտչյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)
Անդամներ՝	**Ս. Մելքոնյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ)
	Ն. Համբարձումյան (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ)
	Ա. Գևորգյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)
	Բ. Եդիգարյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)
Հանձնաժողովի քարտուղար	**Ն. Նիկոլայան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀմ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող)

1. Որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման մասին

(Գ. Մկրտչյան)

Ընդունել ի գիտություն՝

• Հրավերով չէր պահանջվում 1-ին տեղ զբաղեցրած մասնակցից՝ «ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊ ընկերությունից ներկայացնելու որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր:

• Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

• Հրավերով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից հարցման վերաբերյալ եզրակացությունը ստացվել է հրավերով սահմանված ժամկետում:

1. Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1.1 Մասնակցի որակավորումը «Մասնագիտական փորձառություն» չափանիշի մասով գնահատել բավարար:

1.2. Մասնակիցը հայտ ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի:

Մասնակցի որակավորումը «Ֆինանսական միջոցներ» չափանիշի մասով գնահատել բավարար:

1.3 Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակցի որակավորումը «Մասնակցության իրավունք» չափանիշի մասով գնահատել բավարար:

Գնահատման արդյունքներն ամփոփված են գնահատման թերթիկներում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

2.1 «ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊ ընկերության հայտը գնահատել բավարար:

2.2 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել՝ «ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ-ին:

2.3 Անգործության ժամկետը լրանալուց հետո ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

2.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին

(Գ. Մկրտչյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել պայմանագիրը կնքվելու կամ չկնքվելու այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 11:30-ին, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա 6-րդ հարկ, հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Գ. Մկրտչյան

Անդամներ՝ _____ Ս. Մելքոնյան

_____ Ն. Համբարձումյան

_____ Ա. Գևորգյան

_____ Բ. Եդիգարյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Ն. Նիկոլայան